ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 397-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 26-Ի N 1099-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝

1. Հայաստանի Հանրապետության վարչապետի 2022 թվականի սեպտեմբերի 26-ի «Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության ջրի ազգային ծրագրի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների կիրարկումն ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» N 1099-Ա որոշման՝

1) N 1 հավելվածի՝

ա. 8-րդ կետի 3-րդ սյունակի «Արտակարգ իրավիճակների նախարարություն» բառերը փոխարինել «Ներքին գործերի նախարարություն, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն» բառերով,

բ. 12-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«12.	«Հայաստանի Հանրապետության սողանքավտանգ տարածքների ցանկը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարի հրամանի նախագիծ	Ներքին գործերի նախարարություն	2024 թ. հուլիսի 3-րդ տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում	Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքի 29-րդ հոդվածի 4-րդ մաս».

2) N 2 հավելվածի՝

ա. 1-ին կետի 3-րդ այունակի «Շրջակա միջավայրի նախարարություն» բառերը փոխարինել «Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն, Ֆինանսների նախարարություն, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Շրջակա միջավայրի նախարարություն, մարզպետերի աշխատակազմեր, համայնքներ» բառերով,

բ. 2-րդ կետի 3-րդ այունակի «Շրջակա միջավայրի նախարարություն» բառերը փոխարինել «Ներքին գործերի նախարարություն, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն, Շրջակա միջավայրի նախարարություն» բառերով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

26.04.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ